

չանի «Երկֆազ հոսանքի հիդրոգինամիայի մի քանի հարցերի մասին» զեկուցումները:

* * *

Ընդհանուր ժողովը ընտրեց ակադեմիայի նոր ակադեմիկոսներ և թղթակից-անդամներ, անցկացրեց նախագահության անդամների մասնակի ընտրություններ:

Ակադեմիայի իսկական անդամներ ընտրվեցին Բորիս Բորիսովիչ Պիոտրովսկին (հնագիտություն), Սատուր Պավելի Աղայանը (ՍՄԿԿ պատմություն), Արաքսի Թովմասի Բաբայանը (քիմիա):

Թղթակից-անդամներ ընտրվեցին Բաբկեն Նիկոլայի Առաքելյանը (հնագիտություն), Գևորգ Բեգլարի Զանուկյանը (լեզվաբանություն), Համլետ Հարությունի Վարդապետյանը և Զուրի Ֆեոդորովիչ Օսլովը (միջուկային ֆիզիկա և տարրական մասնիկների ֆիզիկա), Արծրուհի Մարտիրոսի Գասպարյանը (քիմիական տեխնոլոգիա), Գուրգեն Տիգրանի Քաղևոսյանը (քիմիա), Վահան Գրիգորի Մխրբաբյանը (քիմիա), Սեդրա Ալեքսանդրի Բակունցը (կենդանիների ֆիզիոլոգիա):

Ակադեմիան այժմ իր կազմում ունի 43 իսկական և 45 թղթակից-անդամ:

Հանրապետության գիտությունների ակադեմիայի պրեզիդենտի լիազորությունների ժամկետը լրանալու կապակցությամբ ակադեմիայի կանոնադրությանը համապատասխան անցկացվեցին պրեզիդենտի ընտրություններ: ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ վերընտրվեց ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը: Նախագահության անդամ և ֆիզիկա-տեխնիկական ու մաթեմատիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար վերընտրվեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Մ. Զըրբաշյանը:

Նախագահության անդամ և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ընտրվեց հանրապետության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Մ. Պ. Աղայանը:

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, Երևանի պետական համալսարանի ռեկտոր Մ. Գ. Ներսիսյանը վերընտրվեց ակադեմիայի նախագահության անդամ:

Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՆԵՐԻ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱՄԲԻՈՆՆԵՐԻ XV ԳԻՏԱ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՍԵՍԻԱՆ

Սկսած 1952 թ., ամեն տարի տեղի է ունենում ՍՍՀՄ ԳԱ և Սովետական Միության որևէ ազգային հանրապետության ԳԱ օտար լեզուների ամբիոնների համատեղ գիտա-մեթոդական սեսիան:

XV գիտա-մեթոդական սեսիան, որը կազմակերպվել էր ՍՍՀՄ ԳԱ և Հայկական ՍՍՀ ԳԱ օտար լեզուների ամբիոնների կողմից, անցկացվեց Երևանում 1967 թ. դեկտեմբերի 1-ից մինչև 25-ը: Սեսիան կոչվում էր հորեյանական, որովհետև համընկնում էր Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակին և այդ կապակցությամբ էլ մի շարք զեկուցումներ նվիրված էին սովետական լեզվաբանության նվաճումներին և ԳԱ օտար լեզուների ամբիոնների զործունեությանը այս հիսնամյակում:

Սովետական Միության բոլոր ազգային հանրապետությունների ԳԱ օտար լեզուների ամբիոններից, ինչպես նաև ՍՍՀՄ ԳԱ բաժանմունքներից և ֆիլիալներից (Լենինգրադ, Նովոսիբիրսկ, Իրկուտսկ, Ցակուտսկ, Սվերդլովսկ, Կազան, Սուրմանսկ) Երևան էին ժամանել պատվիրակություններ՝ ամբիոնի վարիչների

զլխավորությամբ: Պատվիրակություններ կային նաև դեմոկրատական երկրներից (ԳԴՀ, Զեխս-լովակիա, Բուլղարիա, Լեհաստան): Սեսիայի աշխատանքներին, բացի հրավիրված 140 պատվիրակներից, մասնակցում էին նաև Երևանի բարձրագույն ուսումնական հաստատությունների օտար լեզվի դասախոսներ, լեզվաբաններ և այլ հաստատություններում աշխատող օտար լեզվի մասնագետներ:

Սեսիան ներածական խոսքով բացեց Հայաստանի ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը: Նա նշեց, որ հայերը շատ հնուց սկսել են ուսումնասիրել օտար լեզուներ:

Մեսրոպ Մաշտոցը հանդիսանում է նաև օտար լեզվի մեր ամենավաղ և ամենաականավոր ուսուցիչներից մեկը, որն իր աշակերտների հետ միասին Աստվածաշունչը հունարենից թարգմանեց գրաբար, մի թարգմանություն, որը մինչև այսօր էլ մնում է անգերազանցելի: Այնուհետև Վ. Համբարձումյանը նշեց, թե գիտական աշխատողի համար որքան կարևոր է տիրապետել որևէ օտար լեզվի: Այժմ Հայաստանի գիտությունների ակադեմիան գիտական աշխատողներից պահանջում է տիրապետել ոչ

թե մեկ, այլ մի շարք օտար լեզուների, որպեսզի նրանք կարողանան լրիվ չափով օգտվել իրենց մասնագիտության հետ առնչվող օտար լեզվով գրականությունից:

Դեկտեմբերի 1-ից մինչև 6-ը տեղի ունեցած 4 պլենար և 12 սեկցիոն նիստերում լսվեցին և քննարկվեցին լեզվաբանական այժմեական հարցերին, լեզվաբանության նորագույն նվաճումները դասավանդման ընթացքում կիրառելուն և փորձի փոխանակմանը նվիրված ավելի քան 40 զեկուցում և հաղորդում:

Պլենար նիստում «Հոկտեմբերը և սովետական լեզվաբանությունը» թեմայով զեկուցում կարգաց ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Ա. Դեսնիցկայան (Լենինգրադ), «Կենտրոնական և ծայրամասային տարրերը լեզվի քերականական համակարգում» թեմային էր նվիրված ղոկտոր-պրոֆեսոր Վ. Յարցևայի զեկուցումը (Մոսկվա), լեզուների համագրական ուսումնասիրության հարցերի շուրջ զեկուցեց ղոկտոր-պրոֆեսոր Ն. Ազազազեն (Բաքու), ՍՍՀՄ ԳԱ օտար լեզուների ամբիոնի գործունեության մասին զեկուցեց ամբիոնի վարչ, բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Բազիևը: Օտար լեզուների դասավանդման իրենց փորձի մասին զեկուցումներ կարդացին ղոկտ. Կ. Մորիցը (Բեռլին), Լ. Ռոզկովցովան (Պրագա), Կ. Փեխիվանովան և Ն. Շոպովան (Սոֆիա), Ի. Սիլվեստրովիչը (Վարշավա) և ուրիշներ:

Հայաստանի լեզվաբաններից պլենար նիստում զեկուցումներ կարդացին Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Է. Աղայանը՝ «Բաշխման մեթոդը և լեզվական կառուցվածքի տարրեր մակարդակների լեզվաբանական միավորների սահմանումը», ղոկտ.-պրոֆ. Գ. Զահուկյանը՝ «Լեզվաբանական միավորների փոխհարաբերության և նրանց նկարագրման հատկանիշների մասին» և բան. գիտ. թեկ. Է. Աթայանը՝ «Խոսքի մասերի տարրերակիչ հատկանիշները և նրանց դասակարգման չափանիշները» թեմաներով:

Որոշվեց լավագույն զեկուցումները հրատարակել առանձին ժողովածուով: Հայաստանի լեզվաբանների զեկուցումները նույնպես պիտի զետեղվեն այդ ժողովածուում:

Անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն լեզուների սեկցիաներում այս տարի ավելի շատ զեկուցումներ կարդացվեցին օտար լեզուներով, քան նախորդ սեսիաներում: Սեսիայի մասնակիցները ցանկություն հայտնեցին աստիճանաբար ձգտել սեկցիաներում բոլոր զեկուցումները կարդալ և քննարկել տվյալ սեկցիայի լեզվով:

Ըստ սահմանված կարգի, պլենար և սեկցիոն նիստերին հաջորդում են ակադեմիայի սիստեմում աշխատող դասախոսների որակավորումը

բարձրացնելու նպատակով կազմակերպված սեսիոնար պարապմունքներ, որոնք տևում են 10 օր: Այս տարի սեսիոնար պարապմունքներին հատկացվեց ավելի շատ ժամանակ (դեկտեմբերի 7-ից մինչև 25-ը): Սեսիոնար պարապմունքներին մասնակցում էին ավելի քան 60 դասախոս, որոնք ամեն օր 6-ական ժամ կատարելագործվում էին լեզվական հետևյալ ասպեկտների ուղղությամբ. խոսակցական լեզվի պրակտիկա, բանավոր խոսքի զարգացում ըստ լրագրային նյութերի, թարգմանություն մայրենի լեզվից օտար լեզվի, տեքստի քերականական մեկնարանում և գիտական տեքստի վերլուծության մեթոդիկա:

Անգլերեն լեզվի դասախոսների համար կազմակերպված էր 3 խումբ: Պարապմունքները ղեկավարում էին Վ. Կարգինկինը, Է. Բասը, Վ. Մոստոնը, Ն. Շախովան (Մոսկվա), Տ. Միխելսոնը, Ս. Կապինան (Լենինգրադ), Պ. Մեսրոպյանը և Է. Դելալյանը (Երևան):

Գերմաներեն լեզվի գծով գործում էր երկու խումբ, որի աշխատանքները ղեկավարում էին Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունից հրավիրված լեզվաբաններ Կ. Մորիցը, Հ. Պրաշկեր, Յո. Վիգեն, Ա. Շտայնֆյուրերը և Հ. Շրայբերը:

Ֆրանսերեն լեզվի մասնագետների համար կազմակերպված էր մեկ խումբ, որի պարապմունքները ղեկավարում էին Ժ. Օշանինան (Մոսկվա), Մ. Թուսենը և Լ. Կրիկսը (Երևան):

Սեսիոնար պարապմունքները զգալի չափով նպաստեցին մասնակիցների լեզվական գիտելիքների կատարելագործմանը:

Սեսիայի մասնակիցներին Հայաստանի տեսարժան վայրերին և հայ ժողովրդի դարավոր մշակույթին ծանոթացնելու նպատակով կազմակերպվեցին բազմաթիվ էքսկուրսիաներ (Երևանի տեսարժան վայրերը, Մատենադարան, Զրվարթնոց, Էջմիածին, Գառնի, Գեղարդ, Սևան, Մաղկաձոր), որոնցից մի քանիսը անցկացվեցին օտար լեզուներով: Բացի այդ, կազմակերպվեց ֆրանսերեն լեզվով վավերագրական կինոֆիլմերի և հայկական վավերագրական կինոֆիլմերի ցուցադրում:

ՍՍՀՄ ԳԱ օտար լեզուների ամբիոնը և Հայաստանի գիտությունների ակադեմիայի կենտրոնական գրադարանը կազմակերպել էին օտար լեզուների ամբիոնի հրատարակությունների և օտար լեզուներով արտասահմանում լույս տեսած լեզվաբանական նորագույն գրականության ցուցահանդես:

Սեսիայի մասնակիցներից մի շարք մասնագետներ օտար լեզվի դասեր լսեցին և պարապմունքներ անցկացրին Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Այսպիսով, XV դիտա-մեթոդական սեսիան որոշ հետաքրքրություն և աշխույժություն առաջացրեց նաև Երևանի օտար լեզվի մասնագետների, ինչպես նաև ուսանողության շրջանում:

Գոհունակությամբ պետք է նշել, որ այս կարևոր միջոցառումը իրականացվեց չափազանց մեծ հաջողությամբ: Սեսիան հաջող կազմակերպելու ղործում ոչ մի ջանք չխնայեցին կազմակերպչական կոմիտեի նախագահ՝ Հայկական ՍՍՀ ԳԱ վիցե-պրեզիդենտ Ս. Ս. Մկրտչյանը և նախագահի տեղակալ՝ ՍՍՀՄ ԳԱ օտար լեզու-

ների ամբիոնի վարիչ, բանասիրական դիտ. թեկ. Ա. Թ. Ռադիկը: Մեր աշխատանքներին իրենց սիրահոծար օժանդակությունը ցուցաբերեցին Հայաստանի հանրապետական տեխնիկայի տունը, Երևանի պետական համալսարանը, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանը և ռետուրիստի» հայկական բաժանմունքը:

Այլ դիտա-մեթոդական սեսիան կկայանա 1968 թ. աշնանը, Թուրքմենստանի մայրաքաղաք Աշխադդում:

Վ. ԱՎԹԱՆԴԻՅԱՆ

ՀԱՄԱԶԱՍՊ ՈՍԿՑԱՆ

Փետրվարի 25-ին Վիեննայում, 73 տարեկան հասակում մահացավ Համազասպ Ոսկյանը՝ հայ դասական բանասիրության ականավոր ներկայացուցիչը:

Ոսկյանը ծնվել է 1895 թ. Խուսիսքում (Արևմտյան Հայաստան): 12 տարեկանից սովորել է Վիեննայի Մխիթարյան դպրոցում, իսկ 1914 թ. եղել է միաբանության անդամ:

Ոսկյանը շատ տարիներ մանկավարժական գործունեությամբ է զբաղվել և միաժամանակ կատարել բանասիրական հետազոտություններ: Նա բազմաթիվ գիտական հոդվածներ է հրապարակել «Հանգես ամսագրային» մեջ, մի շարք տարիներ եղել է այդ հայագիտական ամսագրի խմբագիրը:

1940 թվականից սկսում են իրար հետևից լույս տեսնել Ոսկյանի խոշոր ուսումնասիրությունները առանձին գրքերով: Հայագիտական մեծ արժեք ունեն այն 10 հատորները, որոնք նվիրված են Թարծր Հայքի, Արցախի, Տարսնի, Կիլիկիայի, Վասպուրականի և Հայաստանի այլ մասերի վանքերին: Բանասիրական մանրակրկիտ աշխատանքի արդյունք են Ոսկյանի աշխատությունները՝ նվիրված հայ միջնադարյան մատենագիրներ Հովհաննես Մարկավազի, Ներսես Լամբրոնացու, Հովհաննես Վանականի, Վարդան Արևելցու, Մխիթար Գոշի, Կիրակոս Գանձակեցու կյանքին ու գործին: «Զորս հայ տաղասացներ» աշխատությամբ Ոսկյանը քննարկում է ներկայացրեց միջնադարյան հայ բանաստեղծներ Հովհաննես Կարնեցուն, Գրիգոր Օշականցուն, Մովսես Գալբիի և Մարտիրոս Ղրիմեցուն: Ոսկյանի մյուս գործերից կարելի է հիշել «Ուսումնասիրություններ հայ նախարարների մասին», մի շարք հայերենի վայրերի ձեռագրացույցակներ, զետաղրքեր և այլն:

Հ. Ոսկյանի աշխատասիրությամբ առաջին անգամ հրատարակվեցին Ստեփանոս Ռոշքայի «Ժամանակագրություն»-ը և Հովհ. Ղրիմեցու «Պատմություն հույանություն վանից Հաղբատայ Ս. Նշանի»-ն, որոնք նկատելի լրացում էին հայ պատմիչների հրապարակված երկերի շարքում:

1963 թ. լույս տեսավ Ոսկյանի «Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանի Վիեննա» մեծածավալ (1154 էջ) աշխատությունը, որը նշանավոր հայագետ Հ. Տաշյանի կազմած մեծ ձեռագրացույցակի երկրորդ հատորն է, իսկ ծրագրով և գիտական նույն մակարդակով կազմված: Այդ աշխատության պակասը վաղուց էր զգացվում հայագիտության մեջ, և Ոսկյանի գործը իրոք շատ կարևոր ներգրում էր:

Ոսկյանը երկու տասնյակ տարի աշխատեց Հայոց կանոնգրքի քննարկը կազմելու ծանր աշխատանքով, հրատարակել կարողացավ մի քանի հատված միայն: Մեծածավալ գործը մնում է անտիպ:

Հ. Ոսկյանը ուշագրի հետևում էր Հայաստանի գիտական կյանքին: «Հանգես ամսագրային» եւ մի շարք գրախոսականներ է տպագրել հայրենիքում լույս տեսած հայագիտական աշխատությունների մասին: Իսկ վերջին տարիներս նա հայ հնաոխ պրքերի վերաբերյալ բազմաթիվ արձեղավոր անդեկություններ էր ուղարկում Երևան, Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան, ուր կազմվում է հայ պրքի քննահանուր մատենագիտությունը: Մերունադարդ գիտեականը, ընայած իր անստողջ վիճակին, Վիեննայի Մխիթարյան մատենադարանի հարյուրավոր հնաոխյեր համեմատում էր գրացույցակների հետ, կազմում բազմաթիվ մոտացված